



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«13» ապրիլի 2021թ.
No 1/18-2/21335-2021

«ԷՅ ԷՅ ԶԻ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
ՏԻԿԻՆ ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
Ք.ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., Տ. 59
ԴԱՍԻՉ՝ 1101, ՀԵՌ. 093 21-60-22
ԷԼ. ՓՈՍՏ՝ AAG.HOLDING.ARMENIA@GMAIL.COM

Հարգելի տիկին Հարությունյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի փետրվարի 11-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Էյ Էյ Զի Հոլդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքվել է ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով բնակատարածությունների մաքրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր, սակայն Պատվիրատուի կողմից մատուցվող ծառայության ընթացքի և որակի ստուգման արդյունքում բազմիցս արձանագրվել են խախտումներ, որոնց շտկման վերաբերյալ (հնարավորինս սեղմ ժամկետում՝ ըստ մաքրման ծառայությունների մատուցման ժամանակացույցի) մշտապես տեղեկացվել է Կատարողին, սակայն այդ ուղղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 կետի ա) և բ) ենթակետերը՝ Պատվիրատուն ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար մասնակի միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 11-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով գնման պայմանագիրը և պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 3 020 000 ՀՀ դրամի որակավորման և 287 504 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նաև նախաձեռնում է «Էյ Էյ Զի Հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:



Միևնույն ժամանակ Ձեզ եմ ներկայացնում պայմանագրերի չկատարված մասով հաշվարկված տույժերի և տուգանքների հաշվարկը.

տույժի հաշվարկ՝ $2\,875\,040 \times 0.05\% = 1\,437.52$ ՀՀ դրամ,
30 աշխատանքային օր ուշացման համար՝ $1\,437.52 \times 30 = 43\,125.6$ ՀՀ դրամ,
տուգանքի հաշվարկ՝ $2\,875\,040 \times 0.5\% = 14\,375.2$ ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին փոխանցել 43 125.6 ՀՀ դրամ Պայմանագրի 5.3 կետի համաձայն որպես տուժանք և 14 375.2 ՀՀ դրամ Պայմանագրի 5.2 կետի համաձայն որպես տուգանք:

4/13/2021



ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.՝ Գ.Ղազարյան
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 060-544-704



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am